

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ



ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ



Ժողովածուի ծածկագիրը 1210-101

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	2
ՀԱՆՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ.....	8
ՄՆԱԳԱՍԹԵՐՔԻ (ՆԵՐԱՈՅԱԼ ԽՄԻՉՔՆԵՐԻ) ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	9
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ, ԳԱԶԻ, ՋՐԻ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՇԽՈՒՄ.....	11
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԳՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ , ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՋՐԱՂՎԱԾՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ.....	13
ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅՈՒՆ.....	16

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ 1

I. ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	20
II. ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	29
III. ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ.....	30
IV. ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	32
V. ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳՐԱՆՔԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	34
VI. ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ.....	37
VII. ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ.....	41
VIII. ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ.....	48

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ 2

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՋԱՔԱՆՈՒՄՆԵՐ.....	52
-----------------------------------	----

ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱԳԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ ԱՎԾ աշխատակազմի նյութական արտադրության և ծառայությունների վիճակագրության բաժին
 հեռ 94-35-46

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերությունը» վիճակագրական ժողովածուն կազմվել է հավաքագրված վիճակագրական հաշվետվությունների և իրականացված դիտարկումների տվյալների հիման վրա:

Ժողովածուն բովանդակում է տեղեկություններ 2012թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերության մասին, տվյալները ներկայացված են՝ վերլուծության մասը՝ 2011-2012թթ. կտրվածքով, հավելվածը՝ հինգ տարվա կտրվածքով, ինչը հնարավորություն է տալիս դիտարկել դրանց դինամիկան:

Ժողովածուի մեջ, մասնավորապես, ներկայացված են հանրապետության արդյունաբերությունը բնութագրող վիճակագրական ցուցանիշները ըստ տնտեսական գործունեության տեսակների, առանձին ճյուղերի և շրջանային բաշխվածության: Տվյալները բերված են ըստ համապատասխան տարիների դինամիկ պատկերի և արտացոլում են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր և ըստ խոշոր ճյուղերի, ինչպես նաև ըստ գործունեության տեսակների ծավալը, արդյունաբերական արտադրանքի կարևորագույն տեսակների արտադրությունը, արտադրական հզորությունները, նյութատեխնիկական բազայի վիճակը և այլն:

Վիճակագրական տվյալները ժողովածուի մեջ բերված են Հայաստանի Հանրապետության դրամով, ընթացիկ գներով:

Բարձր գնահատելով վիճակագրական հաշվետվություններ ներկայացնողների աջակցությունը սույն վիճակագրական ժողովածուի կազմման գործում՝ ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությունն ակնկալում է նրանց ու բոլոր վիճակագրական տեղեկատվություն սպառողների նախաձեռնությունը ու ակտիվությունը սույն վիճակագրական հրապարակման հետագա բարելավման համար:

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն

Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	-
տվյալներ չկան	--
չնշին մեծություն	0.0
ցուցանիշը չի հաշվարկվում	X
տվյալները ճշգրտված են	#

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:

Արդյունաբերության ընդհանուր բնութագիրը

2012թ. հանրապետությունում, փաստացի գներով, թողարկվել է 40871.7մլն դրամի արդյունաբերական արտադրանք:

2011թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 99.2 տոկոս:

Արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալի վրա մեծ ազդեցություն է ունեցել հանքագործական արդյունաբերությունը, որի ծավալի նվազման պատճառով (23.2 տոկոսով) ամբողջ արդյունաբերական արտադրանքի ծավալը նվազել է 7.9 տոկոսային կետով : Այդպիսի ազդեցությունը պայմանավորված է նաև ընդհանուր արտադրության ծավալի մեջ մեծ տեսակարար կշռով, որը կազմել է 2012թ. 26.4տոկոս (2011թ. 40.4 տոկոս):

Արդյունաբերական արտադրանքն ըստ տնտեսական գործունեության տեսակների

	Արտադրության ծավալը, մլն դրամ		Աճի տեմպը, տոկոսներով	(փաստացի գներով)	
				Տեսակարար կշիռը, տոկոսներով	
	2011թ.	2012թ.	2011թ.	2012թ.	
Ամբողջ արդյունաբերությունը	45822.5	40871.7	99.2	100.0	100.0
Հանքագործական արդյունաբերություն <i>որից՝</i>	18508.2	10807.6	76.8	40.4	26.4
մետաղե հանքաքարերի արդյունահանում	17788.6	9481.4	71.0	38.8	23.2
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	719.6	1326.2	184.3	1.6	3.2
Մշակող արդյունաբերություն <i>որից՝</i>	17342.4	19038.1	110.9	37.8	46.6
սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրություն	11087.1	12342.8	113.2	24.2	30.2
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	255.8	264.0	103.2	0.5	0.6
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն	787.0	958.6	121.8	1.7	2.3
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	716.8	845.5	118.0	1.5	2.1
հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում	188.8	196.0	103.8	0.4	0.5
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	524.8	417.3	79.5	1.1	1.0
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	2044.7	2058.2	100.7	4.5	5.0
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	412.3	387.1	93.9	0.9	1.0
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	36.5	39.0	106.8	0.1	0.1

	Արտադրության ծավալը, մլն դրամ		Աճի տեմպը, տոկոսներով	Տեսակարար կշիռը, տոկոսներով	
	2011թ.	2012թ.		2011թ.	2012թ.
ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրություն	23.0	28.1	122.2	0.1	0.1
բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն	178.9	411.5	2.3 անգ.	0.4	1.0
կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրություն	1086.7	1090.0	100.3	2.4	2.7
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	9971.9	11026.0	110.6	21.8	27.0
<i>որից`</i> Էլեկտրաէներգիայի արտադրություն և բաշխում	5866.2	6783.4	115.6	12.8	16.6
գազի արտադրություն, գազակերպ վառելիքի բաշխում խողովակաշարերով	3579.3	3675.1	102.7	7.8	9.0
գոլորշու և տաք ջրի մատակարարում	199.6	246.1	123.3	0.5	0.6
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	326.8	321.4	98.3	0.7	0.8


2012թ. նախորդ տարվա համեմատ արտադրության ծավալների աճ է նկատվել մշակող արդյունաբերության` 10.9 տոկոսով և էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխման բաժիններում` 10.6 տոկոսով, հանքագործական արդյունաբերությունում արձանագրվել է նվազում 23.2 տոկոսով: Ընդ որում մշակող արդյունաբերության բաժնում սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրության և կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրության ծավալների աճը համապատասխանաբար 13.2 և 21.8 տոկոսով ապահովել են ամբողջ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 3.9 տոկոսային կեսով բարձրացմանը:

Սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրության ծավալի տեսակարար կշիռը մշակող արդյունաբերության մեջ 2012թ. կազմել է 64.8 տոկոս` 2011թ. 63.9 տոկոսի դիմաց, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության ծավալի տեսակարար կշիռը` 2012թ. 10.8 տոկոս` 2011թ. 11.8 տոկոսի դիմաց:

Բարձր աճ է գրանցվել մշակող արդյունաբերության բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրությունում, ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրությունում, կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրությունում, բնափայտի մշակման և փայտե արտադրատեսակների արտադրությունում, համապատասխանաբար` 230.0, 122.2, 121.8 և 118.0, տոկոսներով: Նշված գործունեության տեսակների արտադրության ծավալների

տեսակարար կշիռը մշակող արդյունաբերության մեջ 2012թ. կազմել են համապատասխանաբար՝ 2.2, 0.2, 5.0 և 4.5 տոկոս՝ 2011թ. 1.0, 0.1, 4.6, 4.2 տոկոսի դիմաց:


Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2012թ.



Արդյունաբերական արտադրանքի ծավալի վրա դրական ազդեցություն ունեցավ էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրության ու բաշխման ոլորտում գրանցված 10.6 տոկոս աճը՝ նկատի առնելով նշված ճյուղի 27.0 տոկոս տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերական արտադրության ծավալում:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում պետական և ոչ պետական հատվածների տնտեսավարող սուբյեկտների կողմից թողարկված արտադրանքի տեսակարար կշիռը կազմել են համապատասխանաբար՝ 25.4 տոկոս և 74.6 տոկոս՝ 2011թ. համապատասխանաբար 21.1 և 78.9 տոկոսի դիմաց:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ պետական և ոչ պետական հատվածների (տոկոսներով ընդամենի նկատմամբ)



2012թ. արդյունաբերական արտադրանքի արտադրությունը և իրացումն, ըստ շրջանների, բնութագրվում են հետևյալ տվյալներով.


**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը և իրացումն
ըստ շրջանների 2011-2012 թթ.**

	Արտադրանքի /աշխատանքների, ծառայությունների/ ծավալը, փաստացի գներով, մլն դրամ		Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով, մլն դրամ		Իրացված արտադրանքը տոկոսներով փաստացի թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ	
	2011թ.	2012թ.	2011թ.	2012թ.	2011թ.	2012թ.
Ընդամենը	45822.5	40871.7	45596.2	40042.6	99.5	98.0
<i>այդ թվում՝</i>						
բ.Ստեփանակերտ	19729.1	20307.2	19462.6	20122.7	98.6	99.1
Ասկերան	2587.9	2583.3	2302.3	2327.2	89.0	90.1
Հաղրուք	1221.8	1524.5	1234.7	1566.5	101.1	102.8
Մարտակերտ	19338.3	11814.5	19683.6	11458.5	101.8	97.0
Մարտունի	1833.3	3147.0	1800.9	3073.4	98.2	97.7
Շահումյան	92.6	102.1	92.6	102.1	100.0	100.0
Շուշի	298.6	327.8	298.6	327.8	100.0	100.0
Քաշաթաղ	720.9	1065.3	720.9	1064.4	100.0	99.9

Տարածքային կտրվածքով նախորդ տարվա նկատմամբ արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալն ավելացել է Ստեփանակերտ քաղաքում և բոլոր շրջաններում, բացի Մարտակերտի շրջանից, որտեղ գրանցվել է արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալի նվազում 20.7 տոկոսով:


Հարկ է նշել, որ Ստեփանակերտ քաղաքի արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկվել է ընդհանուր արդյունաբերական արտադրանքի 49.7 տոկոսը, իսկ շրջաններից ամենամեծ մասնաբաժինն ունի Մարտակերտի շրջանը՝ 28.9 տոկոս:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ հանրապետության շրջանների 2012թ.



Արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալի նման կառուցվածքը բնորոշ էր նաև նախորդ տարիներին, մասնավորապես 2011թ մայրաքաղաքում գործող սուբյեկտների կողմից արտադրված արդյունաբերական արտադրանքը կազմել է ընդհանուրի 43.1 տոկոսը, իսկ Մարտակերտի շրջանի սուբյեկտներինը՝ 42.2 տոկոս:

Արտադրության ծավալների դինամիկան ըստ եռամսյակների (փաստացի գներով), մլն դրամ



2012թ. արդյունաբերական արտադրության ծավալների դինամիկայի եռամսյակային դիտարկումը բացահայտում է վերջինիս տատանման կախվածությունը հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալների դինամիկայից: Իսկ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ծավալների դինամիկան ցույց է տալիս, որ ինչպես 2011թ., այնպես էլ 2012թ. առաջին և չորրորդ եռամսյակներում ծավալներն ավելի մեծ են, քան երկրորդ և երրորդ եռամսյակներում, ինչը պայմանավորված է սեզոնայնությամբ:

2012թ. արդյունաբերական արտադրանքի ծավալի ամենաբարձր մակարդակը դիտվել է չորրորդ եռամսյակում, որի ընթացքում արտադրվել է ամբողջ արդյունաբերական արտադրանքի ծավալի 29.8 տոկոսը:

Արդյունաբերական արտադրանքի արտադրության և իրացման ծավալները, ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի* 2012թ.

	Տնտեսավարող սուբյեկտների քանակը	Տոկոսներով՝ ընդամենին կատմամբ	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Տոկոսներով՝ ընդամենին կատմամբ	Թողարկված արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով, մլն դրամ	Տոկոսներով՝ ընդամենին կատմամբ	Պատաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն դրամ	Տոկոսներով՝ ընդամենին կատմամբ
Ընդամենը ԼԳՀ	346	100.0	5803	100.0	40871.7	100.0	40042.6	100.0
այդ թվում՝								
մինչև 5 մարդ (գերփոքր)	235	67.9	502	8.6	2198.9	5.4	2143.9	5.4
6-50 մարդ (փոքր)	89	25.7	1445	24.9	12112.9	29.6	11221.7	28.0
51-100 մարդ (միջին)	8	2.3	543	9.4	3383.2	8.3	3484.4	8.7
101 և ավելի մարդ (խոշոր)	14	4.1	3313	57.1	23176.7	56.7	23192.6	57.9

**)Սույն բաշխվածությունը իրականացված է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ԼԳՀ օրենքի համաձայն:*

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 67.9 և 25.7 տոկոս: Հատկանշական է, որ 93.6 տոկոս կազմող գերփոքր և փոքր կազմակերպությունները թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 35.0 տոկոսը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում 6.4 տոկոս կազմող միջին և խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 65.0 տոկոսը:

2012 թ. սպառողական ապրանքների արտադրության ծավալը կազմել է 12046.0 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ աճել է 17.3 տոկոսով: Նշված աճը պայմանավորված է պարենային ապրանքների արտադրության ծավալի 15.5 տոկոս աճով, որը ապահովել է սպառողական ապրանքների արտադրության ծավալի աճի 13.9 տոկոսային կեսը::

Սպառողական ապրանքների արտադրությունը

/հաշվետու տարվա համարների բացթողնման գներով, մլն դրամ/

	2011թ.	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ	2012թ.	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ	Գինամիկայի ինդեքսը (տոկոսներով)
Սպառողական ապրանքներ, ընդամենը	10267.7	100.0	12046.0	100.0	117.3
այդ թվում՝					
պարենային ապրանքներ	9205.4	89.6	10634.1	88.3	115.5
ոգելից խմիչքներ	901.1	8.8	1207.2	10.0	134.0
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	161.2	1.6	204.7	1.7	127.0
այդ թվում՝					
թեթև արդյունաբերության	0.8	-	-	-	-
մշակութային և տնտեսական նշանակության	160.4	1.6	204.7	1.7	127.6


Ծանոթություն. Սպառողական ապրանքները հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

Հանքագործական արդյունաբերություն

2012թ. հանքագործական արդյունաբերության արտադրանքի արտադրության ծավալը կազմել է 10807.6 մլն. դրամ՝ նախորդ տարվա 18508.2 մլն դրամի դիմաց: 2011թ. նկատմամբ արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 76.8 տոկոս:

2012թ. եռամսյակային դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանքագործական արդյունաբերության արտադրանքի արտադրության ծավալները երկրորդ և չորրորդ եռամսյակներում ունեն աճման միտում: Չորրորդ եռամսյակի աճը երրորդի նկատմամբ կազմել է 2.1 անգամ(հիմնականում պայմանավորված հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերում արձանագրված 4.9 անգամ աճով), իսկ երկրորդ եռամսյակի աճը առաջինի նկատմամբ՝ 5.8 տոկոս: 2011թ., նվազման միտում նկատվում է բոլոր եռամսյակներում:

Հանքագործական արդյունաբերության արտադրանքի արտադրության ծավալի դինամիկան ըստ եռամսյակների(փաստացի գներով), մլն դրամ



Սննդամթերքի (ներառյալ խմիչքների) արտադրություն

2012թ. արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալի 30.2 տոկոսը կազմել է սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, որի ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 13.2 տոկոսով՝ կազմելով 12342.8 մլն դրամ:


Սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրության ծավալն ըստ սայրանքատեսակների (բնեղեն արտահայտությամբ)

	Չափման միավորը	2011թ.	2012թ.	Աճի տեմպը, տոկոսներով
Հաց և հացաբուլկեղեն	տոննա	16258.6	17714.3	109.0
Ալյուր	-“-	9396.0	9145.8	97.3
Կարագ գյուղացիական	-“-	14.9	22.9	153.7
Կաթնամթերք	-“-	1473.1	1976.6	134.2
Պանիր	-“-	68.8	156.9	2.3 անգ
Միս(թռչնի)	-“-	144.6	733.4	5.1 անգ
Կոնյակ	հազ. լ	5.3	3.8	71.7
Խաղողի գինի	-“-	173.6	222.8	128.3
Օղի	-“-	802.4	747.7	93.2
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ	-“-	575.7	677.0	117.6
Հանքային ջրեր	հազար 0.5լ. շիշ	10.2	-	-
Մակարոնեղեն	տոննա	317.9	176.2	55.4
Պահածոներ	մլն դրամ	582.0	548.1	94.2
Հրուշակեղեն	տոննա	91.3	106.4	116.5

2012թ. նախորդ տարվա նկատմամբ սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրությունում տեղի է ունեցել արտադրության ծավալի աճ հաց և հացաբուլկեղենի՝ 9.0 տոկոսով, գյուղացիական կարագի՝ 53.7 տոկոսով, կաթնամթերքի՝ 34.2, պանրի՝ 2.3 անգամ, մսի՝ 5.1 անգամ, գինու՝ 28.3 տոկոսով, ոչ ալկոհոլային ըմպելիքների՝ 17.6 տոկոսով, հրուշակեղենի՝ 16.5 տոկոսով արտադրությունում: Նվազել են ալյուրի, կոնյակի, օղու, մակարոնեղենի, պահածոների արտադրության ծավալները, համապատասխանաբար՝ 2.7, 28.3, 6.8, 44.6 և 5.8 տոկոսներով:

Ինչպես 2011թ., այնպես էլ 2012թ. սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրության կառուցվածքում արտադրության ծավալներով առաջատար տեղը զբաղեցնում է հացի և հացաբուլկեղենի արտադրությունը, որի տեսակարար կշիռը ամբողջ սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրության կառուցվածքում կազմում է 40.8 տոկոս, ինչը 2011թ. համանուն ցուցանիշի նկատմամբ նվազել է 0.8 տոկոսային կետով: 2012 թ. ալյուրի արտադրության ծավալի տեսակարար կշիռը սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրության մեջ կազմել է 16.0, ոգելից խմիչքներինը՝ 15.2, կաթնամթերքինը՝ 13.8 տոկոս:


Սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրության ծավալի կառուցվածքն ըստ առանձին ապրանքատեսակների:



Նախորդ տարվա համեմատ սննդամթերքների, ներառյալ խմիչքների արտադրության ծավալի կառուցվածքում 4.7 տոկոսային կետով աճել է միս և մսամթերքի տեսակարար կշիռը, 1.2 տոկոսային կետով նվազել է ոգելից խմիչքի, 2.0 տոկոսային կետով՝ կաթի և կաթնամթերքի, 0.8-ական տոկոսային կետով հաց-հացաբուլկեղենի և ալյուրի տեսակարար կշիռները:

Ըստ եռամսյակների, սննդամթերքների, ներառյալ խմիչքների արտադրության ծավալների դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախորդ եռամսյակի նկատմամբ, ինչպես 2011 թ., այնպես էլ 2012թ. աճ է գրանցվել բոլոր եռամսյակներում:

Սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրության ծավալի դինամիկան ըստ եռամսյակների (փաստացի գներով), մլն դրամ



Ինչպես երևում է գծապատկերից, 2012թ. սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրության ծավալի ամենաբարձր մակարդակը, ինչպես և նախորդ տարում, դիտվել է չորրորդ եռամսյակում, որի ընթացքում արտադրվել է

սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրության տարեկան ծավալի 29.2 տոկոսը (2011թ.՝ 36.9 տոկոսի փոխարեն):

Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում

2012թ. էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ծավալը կազմել է 11026.0 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 10.6 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրությունն ու բաշխումը կազմել է ընդամենի 61.5 տոկոսը կամ 6783.4 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ աճել է 15.6 տոկոսով:

Էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման մասին ավելի ստույգ պատկերացում կազմելու համար կարևորվում է էլեկտրահաշվեկշիռի սխեմայի ուսումնասիրությունը: Նախորդ տարվա համեմատ 2012թ. արտադրված էլեկտրաէներգիան աճել է 36.7 տոկոսով, ներմուծվածը նվազել է 22.6 տոկոսով:


ԼՂՀ էլեկտրահաշվեկշիռը 2011- 2012թթ.

	հազ. կՎտ/ժամ		Աճի տեմպը, տոկոսներով	Տոկոսներով օգտագործված էլեկտրաէներգիայի նկատմամբ	
	2011թ..	2012թ.		2011թ..	2012թ.
Արտադրվել է էլեկտրաէներգիա	119989.0	164081.0	136.7	46.3	62.2
Ներմուծվել է էլեկտրաէներգիա	155058.0	120010.0	77.4	59.8	45.5
Արտահանվել է էլեկտրաէներգիա	15698.0	20367.0	129.7	6.1	7.7
Օգտագործվել է էլեկտրաէներգիա, ընդամենը	259349.0	263724.0	101.7	100.0	100.0
այդ թվում՝					
բնակչության կողմից առևտրային տնտեսավարող սուբյեկտների, ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնարկների կողմից	86954.0	90658.0	104.3	33.5	34.4
ալլ սպառողների կողմից	28857.5	26784.8	92.8	11.1	10.2
ընդամենը կորուստներ որից՝	44481.7	46248.2	104.0	17.2	17.5
տեխնիկական	43533.7	45238.2	103.9	16.8	17.1
գերնորմատիվային (առևտրային)	948.0	1010.0	106.5	0.4	0.4

2012թ. օգտագործված էլեկտրաէներգիայի 62.2 տոկոսը արտադրվել է հանրապետությունում, 45.5 տոկոսը ներմուծվել է Հայաստանի Հանրապետությունից, արտահանվել է արտադրված էլեկտրաէներգիայի 7.7 տոկոսը: Օգտագործված էլեկտրաէներգիայից 90.7 մլն կՎտ/ժ կամ 34.4 տոկոսը սպառվել է բնակչության կողմից:

Տեխնիկական և գերնորմատիվային (առևտրային) կորուստները 2012թ. կազմել են 46.2 մլն կՎտ/ժ, ինչը օգտագործված էլեկտրաէներգիայի 17.5 տոկոսն է և 2011թ. նույնանուն ցուցանիշի նկատմամբ աճել է 0.3 տոկոսային կետով կամ 1766.5 հազ.կՎտ/ժ-ով:


Էլեկտրաէներգիայի կորուստներն ըստ շրջանների (տոկոսներով մուտքագրված էլեկտրաէներգիայի նկատմամբ):



Շրջանային կտրվածքով՝ մուտքագրված էլեկտրաէներգիայի նկատմամբ, կորուստների բարձր մակարդակ արձանագրվել է Քաշաթաղի և Շահումյանի շրջաններում, համապատասխանաբար՝ 28.9 և 25.5 տոկոս: Այդ ցուցանիշի նվազագույն մակարդակ գրանցվել է Ասկերանի շրջանում՝ 10.5 տոկոս: Նախորդ տարվա համեմատ էլեկտրաէներգիայի կորուստները մուտքագրված էլեկտրաէներգիայի նկատմամբ աճել են բոլոր շրջաններում, բացի քաղաք Ստեփանակերտից և Ասկերանի շրջանից:

Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության ու բաշխման խմբի վերջին երկու տարիների ծավալների դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս առաջին և չորրորդ եռամսյակներում գրանցված արտադրության առավելագույն ծավալներ, ինչը բացատրվում է հանրապետության ջեռուցման համակարգի թերզարգացվածությամբ և ջեռուցման նպատակների համար թե՛ բնակչության, և թե՛ կազմակերպությունների կողմից էլեկտրաէներգիայի և գազի սպառման բարձր մակարդակով:


Էլեկտրաէներգիայի եվ գազի արտադրության ու բաշխման դինամիկան ըստ եռամսյակների (մլն դրամ)



Աշխատանքի արտադրողականություն, արդյունաբերությունում զբաղվածների թվաքանակը

2012թ. արդյունաբերության ճյուղում մեկ աշխատողի կողմից արտադրված արտադրանքի ծավալը (համադրելի գներով) կազմել է 7043.2 հազ. դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 501.5 հազ.դրամով կամ 6.6 տոկոսով:

Արդյունաբերությունում մեկ աշխատողի կողմից արտադրված արտադրանքի ծավալը, հազ. դրամ (համադրելի գներով)



2012թ. հանքագործական արդյունաբերությունում մեկ աշխատողի կողմից թողարկված արտադրանքը գերազանցում է էլեկտրաէներգիայի, գազի և

ջրամատակարարման ու մշակող արդյունաբերության նույնանուն ցուցանիշները համապատասխանաբար՝ 59.4 տոկոսով և 23.8 տոկոսով :

2012թ. հանքագործական արդյունաբերությունում մեկ աշխատողի կողմից թողարկված արտադրանքը գերազանցում է միջին հանրապետական նույնանուն ցուցանիշը 27.1 տոկոսով :

2012թ. հանքագործական արդյունաբերությունում մեկ աշխատողի կողմից թողարկված արտադրանքը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 28.9 տոկոսով:

Մշակող արդյունաբերությունում աշխատանքի արտադրողականությունը կազմել է 7230.6 հազ. դրամ և 2011թ. նկատմամբ աճել է 6.6 տոկոսով:

Հարկ է նշել, որ բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների, ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի, կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, սննդամթերքների, ներառյալ խմիչքների, հագուստի արտադրության մորթու մշակման և ներկման, ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի, հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի, կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրությունում մեկ աշխատողի կողմից արտադրված արտադրանքի ծավալների բացարձակ հավելաճերը նախորդ տարվա նկատմամբ կազմել են համապատասխանաբար՝ 3132.8, 2191.3, 1716.7, 1491.6, 750.8, 546.6, 203.8, 255.0, 246.2, 35.8 հազ. դրամ:

Աշխատանքի արտադրողականության նվազում է դիտվել մետաղե հանքաքարերի արդյունահանման 30.7 տոկոսով կամ 3959.3 հազ. դրամով, պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունում՝ 21.4 տոկոսով կամ 1146.9 հազ. դրամով, բնափայտի մշակման և փայտե արտադրատեսակների արտադրությունում՝ 14.9 տոկոսով կամ 782.1 հազ. դրամով,

2012թ. նախորդ տարվա համեմատ (համադրելի գներով) աճել է էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության ու բաշխման ոլորտում մեկ աշխատողի կողմից արտադրված արտադրանքը՝ 2.2 տոկոսով կամ 122.7 հազ. դրամով :

**Մեկ աշխատողի կողմից արտադրված արտադրանքի դինամիկան
(համադրելի գներով)**

	Մեկ աշխատողի կողմից արտադրված արտադրանքը		/հազ. դրամ/
	2011թ.	2012թ.	Գինամիկայի ինդեքսը տոկոսով
Ամբողջ արդյունաբերությունը	7544.7	7043.2	93.4
Հանքագործական արդյունաբերություն	12600.9	8954.1	71.1
<i>որից`</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	12904.0	8944.7	69.3
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	8775.6	9021.8	102.8
Մշակող արդյունաբերություն	6783.3	7230.6	106.6
<i>որից`</i>			
սննդամթերքների, ներառյալ խմիչքների, արտադրություն	8115.0	8661.6	106.7
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	2436.2	2640.0	108.4
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն	5211.9	6703.5	128.6
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	5232.1	4450.0	85.1
հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում	2736.2	2722.2	99.5
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	20992.0	23183.3	110.4
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	7075.1	7825.9	110.6
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	5354.5	4207.6	78.6
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	6083.3	7800.0	128.2
ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրություն	1150.0	1405.0	122.2
բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն	2353.9	5486.7	2.3 անգ
կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրություն	4787.2	4823.0	100.7
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	5494.2	5616.9	102.2
<i>որից`</i>			
Էլեկտրաէներգիայի արտադրություն և բաշխում	5534.2	5914.0	106.9
գազի արտադրություն, գազակերպ վառելիքի բաշխում խողովակաշարերով	10026.1	9496.4	94.7
գոլորշու և տաք ջրի մատակարարում	3838.5	3969.4	103.4
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	944.5	875.7	92.7

2012թ. արդյունաբերությունում զբաղվածների միջին տարեկան ցուցակային թվաքանակը 5803 մարդ է և նախորդ տարվա համեմատ կազմել է 106.2 տոկոս, ընդ որում` հանքագործական արդյունաբերությունում զբաղվել է աճ` 8.1 տոկոս, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտում` 8.2 տոկոս, մշակող արդյունաբերությունում` 4.1 տոկոս:

Արդյունաբերությունում զբաղվածների միջին տարեկան ցուցակային թվաքանակը

/համապատասխան ժամանակաշրջանի միջին ցուցակային թիվը, մարդ/


	2011թ.	2012թ.	Գինամիկայի ինդեքսը (տոկոսներով)
Ամբողջ արդյունաբերությունը	5462	5803	106.2
<i>այդ թվում՝</i>			
Հանքագործական արդյունաբերություն	1117	1207	108.1
Մշակող արդյունաբերություն	2530	2633	104.1
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	1815	1963	108.2

Իրացվելիություն

Արդյունաբերական արտադրության ֆինանսական արդյունքների կարևորագույն բնութագրիչ է հանդիսանում արտադրված ապրանքների իրացվելիության մակարդակը, որը հաշվետու տարում կազմել է 98.0 տոկոս՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.5 տոկոսային կետով: Այսինքն՝ արդյունաբերությունում արտադրված 40871.7 մլն դրամ պատրաստի արտադրանքի պարագայում իրացվել է 40042.6 մլն դրամի պատրաստի արտադրանք, որից՝ ԱՊՀ երկրներում՝ 12886.9 մլն դրամի, այլ երկրներում՝ 542.2 մլն դրամի արտադրանք: ԱՊՀ երկրներում իրացված արտադրանքի ծավալը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 60.0 տոկոս, իսկ այլ երկրներում՝ 143.8 տոկոս:


2012թ. նախորդ տարվա համեմատ իրացվելիության մակարդակի նվազումը հիմնականում պայմանավորված է հանքագործական արդյունաբերության իրացվելիության մակարդակի նվազումով: Այսպես, հանքագործական արդյունաբերության իրացվելիությունը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 5.4 տոկոսային կետով՝ կազմելով 96.2 տոկոս:

Արդյունաբերության առանձին հատվածների իրացվելիության մակարդակը 2012 թ. (տոկոսներով)



Տնտեսական գործունեության տեսակների կտրվածքով իրացվելիության նվազագույն մակարդակ է արձանագրվել ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունում, որտեղ իրացված արտադրանքի հարաբերակցությունը թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ կազմել է 28.9 տոկոս: Իր հերթին, տվյալ ցուցանիշի առավել բարձր մակարդակ է արձանագրվել հագուստի արտադրության, մորթու մշակման և ներկման (103.0) և սննդամթերքների, ներառյալ խմիչքների արտադրության (102.0) բնագավառներում:

Արդյունաբերական արտադրանքի իրացվելիության մակարդակը ըստ շրջանների 2011-2012թթ.



Տարածքային կտրվածքով իրացվելիության ամենացածր մակարդակը դիտվել է Ասկերանի շրջանում՝ 90.1 տոկոս(2011թ. `89.0 տոկոս):

ՀԱՎԵԼՎԱԾ 1

I. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

	2008	2009	2010	2011 [#]	2012
Արդյունաբերական կազմակերպությունների քանակը*	220	300	304	323	346
Արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով), մլն դրամ	25345.5	34092.3	42991.8	45822.5	40871.7
Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, նախորդ տարվա նկատմամբ, տոկոսներով	111.6	115.6	105.3	100.8	99.2
Արդյունաբերությունում աշխատողների միջին տարեկան թվաքանակը, մարդ	5034	5170	5357	5462	5803
Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	86502	91570	99637	105019	108030
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ	101.2	116.4	119.7	105.7	89.9

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՆԱԿՆ

ԸՍՏ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՃՅՈՒԿԵՐԻ

	2008	2009	2010	2011 [#]	2012
Ամբողջ արդյունաբերությունը դրանից՝	220	300	304	323	346
Էլեկտրաէներգետիկա	2	2	2	10	11
հանքագործական արդյունաբերություն	1	10	11	12	15
անտառային, փայտամշակման և ցելյուլոզի-թղթի արդյունաբերություն	24	26	36	45	62
շինարարական նյութերի արդյունաբերություն	27	53	62	65	61
թեթև արդյունաբերություն	3	3	3	3	1
սննդի արդյունաբերություն	123	158	162	158	173
ռադիոէլեկտրոնային	1	1	1	1	1
Էլեկտրատեխնիկական պոլիգրաֆիկական արդյունաբերություն	2	2	2	1	1
ալյ ճյուղեր	5	5	3	3	3
	32	40	22	25	18

* Այստեղ և հետագայում բոլոր արտասկզբում արտացոլված է միայն վիճակագրական հաշվետվություն ներկայացրած կազմակերպությունների քանակը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ

ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

	2008	2009	2010	2011 #	2012
Ամբողջ արդյունաբերությունը	220	300	304	323	346
այդ թվում՝					
հանքագործական արդյունաբերություն	1	10	11	12	15
մշակող արդյունաբերություն	205	274	277	290	308
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	14	16	16	21	23

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԻՆԴԵՔՍՆԵՐՆ

ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ

Տարիներ	Ամբողջ արդյունաբերությունը	այդ թվում՝		
		հանքագործական արդյունաբերություն	մշակող արդյունաբերություն	Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում
2007=100.0				
2008	111,6	97,8	122,9	122,9
2009	129,0	101,9	161,7	139,9
2010	135,8	101,2	183,9	149,7
2011	136,9	86,1	223,4	158,0
2012	135,8	66,1	247,8	174,8
նախորդ տարվա նկատմամբ, տոկոսներով				
2008	111,6	97,8	122,9	122,9
2009	115,6	104,2	131,6	113,8
2010	105,3	99,3	113,7	107,0
2011	100,8	85,1	121,5	105,6
2012	99,2	76,8	110,9	110,6

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԻՆԴԵՔՍՆԵՐՆ

ԸՍՏ ԴՅՈՒՂԵՐԻ

(2007= 100.0)

	2008	2009	2010	2011	2012
Ամբողջ արդյունաբերությունը	111,6	129,0	135,8	136,9	135,8
<i>դրանից՝</i>					
Էլեկտրաէներգետիկա	125,2	146,6	162,6	166,7	192,7
հանքագործական արդյունաբերություն	97,8	101,9	101,2	86,1	66,1
անտառային, փայտամշակման և ցելյուլոզի-թղթի արդյունաբերություն	67,7	107,1	138,5	135,9	145,9
չինարարական նյութերի արդյունաբերություն	153,6	286,9	356,6	511,1	490,6
թեթև արդյունաբերություն	100,1	108,9	134,9	131,6	154,2
սննդի արդյունաբերություն	133,2	174,9	187,0	238,0	269,4
ռադիոէլեկտրոնային	90,7	83,6	208,9	81,9	100,1
էլեկտրատեխնիկական	132,3	1,9	0,0	0,0	0,0
պոլիգրաֆիկական արդյունաբերություն	124,6	117,9	133,2	122,5	127,2
այլ ճյուղեր	119,4	122,9	126,9	136,1	147,8

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԻՆԴԵՔՍՆԵՐՆ

ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ

(տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ)

	2008	2009	2010	2011	2012
Ամբողջ արդյունաբերությունը	111.6	115.6	105.3	100.8	99.2
<i>դրանից՝</i>					
Էլեկտրաէներգետիկա	125.2	117.1	110.9	102.5	115.6
հանքագործական արդյունաբերություն	97.8	104.2	99.3	85.1	76.8
անտառային, փայտամշակման և ցելյուլոզի-թղթի արդյունաբերություն	67.7	158.2	129.3	98.1	107.4
շինարարական նյութերի արդյունաբերություն	153.6	186.8	124.3	143.3	96.0
թեթև արդյունաբերություն	100.1	108.8	123.9	97.5	117.2
սննդի արդյունաբերություն	133.2	131.3	106.9	127.3	113.2
ռադիոէլեկտրոնային	90.7	92.2	2.5 անգ	39.2	122.2
Էլեկտրատեխնիկական պոլիգրաֆիական արդյունաբերություն	124.6	94.6	113.0	92.0	103.8
այլ ճյուղեր	119.4	102.9	103.3	107.2	108.6

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԻՆԴԵՔՍՆԵՐՆ


ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

(տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ)

	2008	2009	2010	2011	2012
Ամբողջ արդյունաբերությունը	111.6	115.6	105.3	100.8	99.2
այդ թվում՝					
հանքագործական արդյունաբերություն	97.8	104.2	99.3	85.1	76.8
<i>որից՝</i>					
մետաղե հանքաքարերի արդյունահանում	97.8	104.2	98.1	85.2	71.0
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր			137.2	81.8	184.3
մշակող արդյունաբերություն	122.9	131.6	113.7	121.5	110.9
<i>որից՝</i>					
սննդամթերքների, ներառյալ խմիչքների արտադրություն	133.2	131.3	106.9	127.3	113.2
մանածագործական արտադրություն	-	-	-	-	-
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	123.2	46.6	4.9 անգ.	84.8	103.2
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրություն	96.4	121.3	95.8	102.5	121.8
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	63.5	155.3	136.5	122.6	118.0
թղթի և ստվարաթղթի արտադրություն և հրատարակչական գործ	-	-	133.3	-	-
հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում	124.6	94.6	112.9	92.0	103.8
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	200.0	474.7	60.9	2.4 անգ.	79.5

	2008	2009	2010	2011	2012
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	121.7	203.8	176.6	144.1	100.7
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	236.7	181.6	86.7	93.0	93.9
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	341.5	15.2	59.4	3.6 անգ.	106.8
էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրություն	45.2	5.7	-	-	-
ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրություն	90.8	92.2	2.5 անգ.	39.2	122.2
բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն	72.8	48.1	149.5	78.2	2.3 անգ
կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրություն	133.4	107.6	124.1	82.1	100.3
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	122.9	113.8	107.0	105.6	110.6


ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԻՆԴԵՔՍՆԵՐՆ
ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ
(2007 = 100)



**ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ
ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՃՅՈՒՂԵՐԻ
(համապատասխան տարիների ընթացիկ գներով, տոկոսներով)**

	2008	2009	2010	2011	2012
Ամբողջ արդյունաբերությունը <i>դրանից՝</i>	100.0	100.0	100.0	100.0	100.0
Էլեկտրաէներգետիկա	13.2	14.8	13.3	12.8	16.6
հանքագործական արդյունաբերություն	39.4	41.3	45.7	40.4	26.4
անտառային, փայտամշակման և ցելյուլոզի-թղթի արդյունաբերություն	2.5	4.1	4.2	3.9	4.7
շինարարական նյութերի արդյունաբերություն	4.6	4.9	4.8	6.5	7.0
թեթև արդյունաբերություն	3.1	2.5	2.5	2.3	3.0
սննդի արդյունաբերություն	24.4	23.3	20.2	24.2	30.2
ռադիոէլեկտրոնային	0.1	0.1	0.1	0.1	0.1
Էլեկտրատեխնիկական	0.5	0.0	0.0	0.0	0.0
պոլիգրաֆիական արդյունաբերություն	0.8	0.5	0.5	0.4	0.5
այլ ճյուղեր	11.4	8.5	8.7	9.4	11.5


**ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ
ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՃՅՈՒՂԵՐԻ
(համապատասխան տարիների ընթացիկ գներով, տոկոսներով)**



**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ
ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ
(տոկոսներով ընդամենի նկատմամբ)**

	2008	2009	2010	2011	2012
Ամբողջ արդյունաբերությունը այդ թվում՝	100.0	100.0	100.0	100.0	100.0
հանքագործական արդյունաբերություն	39.4	41.3	45.7	40.4	26.4
մշակող արդյունաբերություն	39.5	36.2	33.1	37.8	46.6
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	21.1	22.5	21.2	21.8	27.0

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ
ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ
(տոկոսներով ընդամենի նկատմամբ)**



**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆ
ԸՍՏ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԻ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ
(տոկոսներով)**

Ընդամենը	Կազմակերպությունների քանակը	Արտադրանքի ծավալը ընթացիկ գներով	Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային քվաքանակը
Ընդամենը	100.0	100.0	100.0
այդ թվում՝			
մինչև 5000 հազ. դրամ	45.7	0.7	5.5
5001 - 10000 հազ. դրամ	10.7	0.7	3.0
10001 - 50000 հազ. դրամ	23.4	4.3	9.8
50001 - 100000 հազ. դրամ	5.5	4.0	6.1
100001 - 150000 հազ. դրամ	4.3	5.2	6.3
150001 - 200000 հազ. դրամ	1.7	3.0	5.0
200001 - 300000 հազ. դրամ	1.7	4.2	3.5

	Կազմակերպությունների քանակը	Արտադրանքի ծավալը ընթացիկ գներով	Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը
300001 - 500000 հազ. դրամ	3.2	9.9	9.6
500001 – 1000000 հազ. դրամ	2.3	16.4	13.9
1000001 և ավելի հազ. դրամ	1.5	51.6	37.3

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆ ԸՍՏ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱ - ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹՎԱԶԱՆԱԿՈՎ ՈՐՈՇՎՈՂ ՉԱՓԵՐԻ 2007-2012ԹԹ.

(տոկոսներով)

	Կազմակերպությունների քանակը	Արտադրանքի ծավալը ընթացիկ գներով	Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը
2007			
Ընդամենը	100.0	100.0	100.0
այդ թվում՝			
մինչև 5 մարդ	55.9	5.1	5.5
6-50 մարդ	37.1	13.7	23.4
51-100 մարդ	1.5	1.8	4.0
101 և ավելի մարդ	5.5	79.4	67.1
2008			
Ընդամենը	100.0	100.0	100.0
այդ թվում՝			
մինչև 5 մարդ	60.0	8.0	7.3
6-50 մարդ	33.7	16.7	22.6
51-100 մարդ	2.7	5.2	8.0
101 և ավելի մարդ	3.6	70.1	62.1
2009			
Ընդամենը	100.0	100.0	100.0
այդ թվում՝			
մինչև 5 մարդ	68.4	9.3	8.9
6-50 մարդ	27.3	17.4	24.0
51-100 մարդ	1.3	4.7	4.7
101 և ավելի մարդ	3.0	68.6	62.4
2010			
Ընդամենը	100.0	100.0	100.0
այդ թվում՝			
մինչև 5 մարդ	68.8	7.8	7.9
6-50 մարդ	26.3	17.3	21.1
51-100 մարդ	1.6	5.7	7.0
101 և ավելի մարդ	3.3	69.2	64.0
2011			
Ընդամենը	100.0	100.0	100.0
այդ թվում՝			
մինչև 5 մարդ	68.4	10.3	8.2
6-50 մարդ	27.5	20.5	25.9

	Կազմակերպությունների քանակը	Արտադրանքի ծավալը ընթացիկ գներով	Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային քվաքանակը
51-100 մարդ	1.3	2.3	5.4
101 և ավելի մարդ	2.8	66.9	60.5
		2012	
Ընդամենը	100.0	100.0	100.0
այդ թվում՝			
մինչև 5 մարդ	67.9	8.6	5.4
6-50 մարդ	25.7	24.9	29.6
51-100 մարդ	2.3	9.4	8.3
101 և ավելի մարդ	4.1	57.1	56.7

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԵՂԵՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ

	2008	2009	2010	2011	2012
Էլեկտրաէներգետիկա					
Էլեկտրաէներգիա, մլն. կՎտ/ժ	97.1	119.2	177.6	120.0	164.1
Հանքագործական արդյունաբերություն					
Խտանյութ, թ.տ.մ.	27605.0	28751.0	28197.0	24038.0	17065.0
Անտառային, փայտամշակման և գեյոլոգիայի արդյունաբերություն					
սղոցանյութեր, մ ³	318.2	428.9	129.2	478.9	2372.9
կահույք, մլն դրամ	173.3	188.6	281.5	584.3	599.3
կաղնն տակառներ, հազ.լ	171.7	144.5	348.8	292.3	173.9
մանրատալտակ, մ2	5324.9	10813.7	517.0	2590.6	-
Շինանյութերի արդյունաբերություն					
երևսպատման սալեր բնական քարից, մ ²	13132.5	18254.6	23104.4	28190.6	27999.1
եզրային քարեր, գծային մ	2681.8	4747.3	6368.9	5331.5	4076.5
կիր, տ	50.5	53.9	138.4	59.0	5.5
պատուհանի կառուցահատվածներ, մ ²	4426.7	7873.1	7915.2	8869.1	7055.0
պոլիէթիլենային խողովակներ, գծային հազ. մ	140.5	303.4	202.8	458.8	331.8
Թեթև արդյունաբերություն					
կարած ապրանքներ, մլն դրամ	132.4	54.6	301.8	255.8	264.0
կոշիկ, հազ. զույգ	120.1	133.2	111.8	100.6	109.2
Մանրի արդյունաբերություն					
միս, տ	302.4	745.5	434.5	144.6	733.4
կաթ և կաթնամթերք, տ	1243.6	1596.9	1509.3	1473.1	1976.6
պանիր, տ	21.1	41.5	50.9	68.8	156.9
գյուղացիական կարագ, տ	1.0	2.1	14.2	14.9	22.9
օղի, հազ. լ	1112.0	1138.1	779.0	802.4	747.7
կոնյակ, հազ. լ	40.0	3.9	13.1	5.3	3.8
խաղողի գինի, հազ. լ	180.0	177.7	172.3	173.6	222.8
հաց և հացամթերք, տ	10525.1	12967.8	14290.5	16258.6	17714.3
ալյուր, տ	5703.0	10117.7	7626.0	9396.0	9145.8
մակարոնեղեն, տ	38.9	144.8	175.9	317.9	176.2
Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն					
լուսատուներ, հազ. հատ	0.16	-	-	-	-


ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
(բացթողման գներով, մլն դրամ)

	2008	2009	2010	2011	2012
Սպառողական ապրանքներ	6341.2	7563.7	8969.3	10267.7	12046.0
այդ թվում՝					
պարենային ապրանքներ	4173.0	6290.7	6805.1	9205.4	10634.1
ալկոհոլային խմիչքներ	1941.0	1105.5	1783.1	901.1	1207.2
ոչ պարենային ապրանքներ	227.2	167.5	381.1	161.2	204.7
դրանից՝					
թեթև արդյունաբերության ապրանքներ	45.4	-	-	0.8	-
մշակութային և սպորտային և տնտեսական նշանակության	181.8	167.5	381.1	160.4	204.7

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՔՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԿ ԸՆԶԻ ՀԱՇՎՈՎ
(դրամ)

	2008	2009	2010	2011	2012
Սպառողական ապրանքներ	45339.9	53491.5	62471.6	70931.6	82142.3
այդ թվում՝					
պարենային ապրանքներ	29837.2	44488.7	47397.9	63593.0	72514.4
ալկոհոլային խմիչքներ	13878.2	7818.2	12419.3	6225.0	8232.0
ոչ պարենային ապրանքներ	1624.5	1184.6	2654.4	1113.6	1395.9
դրանից՝					
թեթև արդյունաբերության ապրանքներ	324.6	-	-	5.5	-
մշակութային և սպորտային և տնտեսական նշանակության	1299.9	1184.6	2654.4	1108.1	1395.9

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՏՈԿՈՍՆԵՐՈՎ



II. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱՀԱՇՎԵԿԵԾԻՈՒԸ (մլն. կՎտ ժամ)

	2008	2009	2010	2011	2012
Արտադրվել է էլեկտրաէներգիա	97.1	119.2	177.6	120.0	164.1
Ներմուծվել է էլեկտրաէներգիա	132.7	134.8	96.3	155.1	120.0
Արտահանվել է էլեկտրաէներգիա	5.7	25.5	41.0	15.7	20.4
Ծախսվել է էլեկտրակայանների սեփական արտադրական կարիքների համար	0.4	0.5	0.5	1.6	1.5
կորուստներ ընդհանուր օգտագործման ցանցերում	45.2	42.6	39.5	42.9	44.7
բաժանորդներին օգտակար բացթողումը, ընդամենը	178.5	185.4	192.9	214.9	217.5
այդ թվում՝					
արդյունաբերություն	34.3	38.7	36.7	37.0	40.0
շինարարություն	8.1	6.9	7.2	7.5	6.8
գյուղատնտեսություն	6.0	3.5	4.1	9.2	9.0
բնակչություն	72.5	75.8	79.6	87.0	90.7
բյուջետային կազմակերպություններ	36.2	28.0	37.4	45.3	43.0
այլ սպառողներ	21.4	32.5	27.9	28.9	28.0

III. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱ - ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ
ԸՍՏ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՆԵՐԻ**

	2011	2012	Տոկոսներով ընդամենի նկատմամբ		Աճի տեմպը, տոկոսներով
			2011	2012	
			/մլն դրամ/		
Ամբողջ արդյունաբերությունը	51449.3	72144.6	100.0	100.0	140.2
<i>որանից՝</i>					
Էլեկտրաէներգետիկա հանքագործական	13218.0	27001.1	25.7	37.4	2.0 անգ
